ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանումը՝
«Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» Կրթական ծրագիր
Ֆինանսավորման աղբյուրը՝
Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ վիրտուալ պլատֆորմի և էլեկտրոնային գրադարանի մշակման և ներդրման խորհդատվական ծառայություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ տող 8

<<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամը Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի միջոցներից ստացել է դրամաշնորհ, և նախատեսվում է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Տվյալ խորհրդատվական ծառայությունը *(այսուհետ՝ Ծառայություններ)* ներառում է հետևյալ աշխատանքները.

- Մշակել վիրտուալ էլեկտրոնային պլատֆորմ և էլեկտրոնային գրադարան
- Տեղադրել էլեկտրոնային պլատֆորմը և էլեկտրոնային գրադարանը ՀՊՄՀ-ի սերվերի վրա,
- Փորձարկել և գործարկել Էլեկտրոնային պլատֆորմը և էլեկտրոնային գրադարանը
- Տրամադրել շահագործման ընթացիկ խորհրդատվություն և առնվազն 24 ամիս երաշխիքային սպասարկում՝ համակարգի գործառույթների ընթացիկ բարելավման և փոփոխման նպատակով:

Խորհրդատվկան աշխատանքները կիրականացնի 6,5 ամսվա ընթացքում՝ 4 փուլով:

<<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամը համապատասխանող Խորհրդատվական ընկերություններին *(այսուհետ՝ Խորհրդատուներ)* հրավիրում է ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված կազմակերպություններըպետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումները և համապատասխան փորձ:

Դիմող կազմակերպությունը պետք է բավարարի փորձի և որակավորման հետևյալ պայմաններին.

- **Կազմակերպության ընդհանուր փորձ**

- ՏՀՏ ոլորտում առնվազն 3 տարվա գործունեություն
- Կայքերի, հարթակների ծրագրավորման առնվազն 3 տարվա փորձ

- **Կազմակերպության հատուկ փորձ**
- Կրթության ոլորտին առնչվող էլեկտրոնային նյութերի/հարթակի մշակման փորձ

- **Աշխատակազմի որակավորում**
- Կազմակերպությունը էլ-պլատֆորմի և էլ-գրադարանի աշխատանքների համար պետք է ներգրավի որակյալ աշխատակազմ՝ առնվազն երկու ծրագրավորող և առնվազն մեկ վեբ-դիզայներ:

  - **Ծրագրավորողներին ներկայացվող պահանջներ՝**
  - Ծրագրավորման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
  - Ուսումնական պլատֆորմի կամ համանման ուսումնական կայքի ծրագրավորման փորձ
  - Օտար լեզվի՝ ռուսերեն կամ անգլերեն, իմացություն

  - **Վեբ-դիզայներին ներկայացվող պահանջներ՝**
  - Վեբ-դիզայնի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
  - Պլատֆորմի կամ համանման կայքի վեբ դիզայնի աշխատանքների փորձ
  - Օտար լեզվի՝ ռուսերեն կամ անգլերեն, իմացություն

Խորհրդատվական կազմակերպությունը կգնահատվի հետևյալ կերպ.
- Կազմակերպության ընդհանուր փորձը – 30 միավոր
- Կազմակերպության հատուկ փորձը - 40 միավոր
- Աշխատակազմի որակավորումը -30 միավոր

Կազմակերպությունը դիմումին կից պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
- պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները,
- տեղեկանք կազմակերպության գործունեության ժամանակահատվածի մասին և այդ ընթացքում իրականացրած համապատասխան բնույթի աշխատանքների ցանկը՝ ներառյալ պայմանագրի առարկան (նկարագրությունը), պայմանագրի արժեքը, ժամկետները և պատվիրատու կազմակերպության անվանումը և իրավաբանական հասցեն, հիմնական աշխատակազմի անձնական թերթիկները (CV), որոնք պետք է պարունակեն աշխատակցի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը: Աշխատակազմի յուրաքանչյուր անդամի անձնական թերթիկը պետք է ստորագրված լինի այդ անդամի և կազմակերպության պատասխանատուի կողմից:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի համաձայն «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության

վարկերով ու դրամաշնորհներով խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» *(Խորհրդատուների ուղեցույց*) Խորհրդատուի որակավորման հիման վրա ընտրության մեթոդի:

Համապատասխան փորձ ունեցող կազմակերպությունները կարող են դիմել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ ք. Երևան, Տիգրան Մեծի փող. 17 հասցեով, (էլ. փոստ. interdep@aspu.am) մինչև 2018թ. մարտի 12-ը ժամը 17:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (+37410) 597086 հեռախոսահամարով: